

տեղ արխիվում եղած տարբերակները: Նա ոչ-տաղտրածել է նաև առանձին գործերի ստեղծագործական պատմության հետ առնչվող մանրամասները, մամուլական կիցների արժեքավոր վերլուծությունները, ինչպես նաև հենց իր՝ բանաստեղծի հազարյալ ստեղծությունները:

«Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը» գիրքն ընդհանուր ամամբ գրված է գիտական պատշաճ մակարդակով, լեզուն սեղմ է ու արտահայտիչ, ոճը՝ հստակ, տեղ-տեղ պատկերավոր: Գրական պրոպեդիան բնութային ընթացքում, բանաստեղծի ստեղծագործությունն արժեքավորելիս գրանորվել է հեղինակի գեղարվեստական հաշվեր, էրուդիցիան: Գրքում կատարված վերլուծությունները մեծ մասամբ կոնկրետ են, եզրակացություններն ու գնահատականները բուսացել են հստակ, արտաշայտություն:

Ցավով պետք է նշել, սակայն, որ մի քանի տեղ սպրդել են այնպիսի ձևակերպումներ, որոնք բացահայտորեն միշտ չեն, որոնց հետ համաձայնվել չի կարելի: Այսպես, արինակ, խոսելով «Արագն էկավ» երգի մասին, հեղինակը վերջում գրում է. «Ահա գազափարի և ձկն

ալի երչանիկ միասնությունը, որ հատուկ է միայն ժողովրդական ստեղծագործությունը» (էջ 95): Մի՞թե պարզ չէ, որ նման մտայնման գեղարվեստ մեծար կլիներ ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ ցույց տալ որևէ կատարյալ գրական երկ, որն ստեղծել է ոչ թե ժողովուրդը, այլ մի անհատ հեղինակ, ասենք Եկերտիրը կամ Տերյանը: Այլ մի՞թե ապացույցելու հարկ կա, որ ձկն և բովանդակության այն երչանիկ միասնությունը, որի մասին խոսում է մեր հեղինակը, հատուկ է ամեն մի իսկական գեղարվեստական ստեղծագործության, գրական բոլոր հանձարեղ երկերին: Անսպասելի է թվում նաև 131-րդ էջում տեղ գտած այն պնդումը, թե՛ «քնարական մեղմ նկարագրի տեր Հովհաննիսյանին ավելի մաս էր Պուշկինը, քան Արմենատիրը»:

Մի փոքր ավելի ուշադիր լինելու գեղարվեստական վերլուծումը կարելի էր խուսափել նման վրիպումներից: Այլ դրանից միայն կշահեր ամբողջության մեջ հաշտված, շատ կողմնորոշ հետաքրքրական այս ուսումնասիրությունը:

Ն. ՀԱՐՈՒԹՅԱՆ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Լեզվաբանության պատմություն, I հատոր, Երևան, 1960, 635 էջ, գինը 2 ո. 40 կ., II հատոր, Երևան, 1962, 603 էջ, գինը 2 ո. 11 կ.:

Հրապարակի վրա է պրոֆ. Գ. Բ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» ծավալուն աշխատությունը, որի մեջ հանգամանորեն ու ամբողջական ձևով վերլուծության է ենթարկվում լեզվաբանական գիտության անցած ուղին սկզբից մինչև մեր օրերը: Աշխատությունը արժեքավոր ներդրում է լեզվաբանության պատմության և տեսության բնագավառում, ուշադրավ է նոր հարցադրումներով, նյութի բազմակողմանի ընդգրկմամբ, վերլուծության ուրույն եղանակներով, ինչպես և մեթոդաբանական կուռ կառուցվածքով:

Ծիշտ է, նշված պրոբլեմին ուշադրություն են դարձրել այլ լեզվաբաններ ևս, օրինակ, կարելի է հիշատակել դանիական գիտնական Տոմսենի հայտնի աշխատությունը: Սակայն հարցերի ընդգրկման, մշակման եղանակով, մեթոդաբանական ու մեթոդական առումով այդ աշխատությունը այլևս չի կարող բավարարել ժամանակակից պահանջները: Վերջին տասնամյակում մեզ մոտ և արտասահմանում այս կամ այն չափով անդրադարձել են լեզվաբանության պատմության հարցերին, բայց այդ ուղղու-

թյամբ կատարված աշխատանքները ունեն ուրվագծային բնույթ՝ հարցերի մասնակի կամ համառոտ ընդգրկումներով: Կան, անկասկած, մենագրական արժեքավոր ուսումնասիրություններ առանձին երկրների լեզվաբանության կամ առանձին լեզվաբանական ուղղությունների պատմության վերաբերյալ: Սակայն համաշխարհային լեզվաբանության պատմության ուղղությամբ այդ բանը խորությամբ չի արվել:

Գրախոսվող աշխատության ներածության մեջ հեղինակը նախապես տալիս է համապատասխան գրականության տեսությունը, ապա անցնում է լեզվաբանության պատմության պարբերացման հարցերին: Այս կապակցությամբ գնահատվում է այն գրականը, ինչ ձևով է բերվել անցյալում, միաժամանակ նշվում են թերությունները:

Հայտնի է, որ լեզվաբանության պատմությունը սովորաբար բաժանում են «նախագիտական» (մինչև XIX դ.) և «գիտական» (XIX դարը և հետո) շրջանների: Պրոֆ. Զահուկյանը նշում է, որ այս անվանումները անհաջող են, թյուրիմացությունների տեղիք են տալիս:

Ինչպես տրադիցիոն պարբերացման, այնպես էլ առանձին հեղինակների առաջ քաշած պարբերացումների հիմնական թերությունը նյութի բաշխումն է: Ոմանք նյութը բաշխում են ըստ լեզվարանների, ոմանք ըստ ուղղությունների, ոմանք ըստ լեզվարանության բաժինների ու ճյուղերի (դիսցիպլինների): Ոմանք էլ՝ ըստ տվյալ շրջանում արժարժված կարևորագույն պրոբլեմների: Գրախոսվող աշխատության մեջ հաղթահարված են այս կարգի դժվարություններն ու թերությունները, և նյութը բաշխված է միասնական գիտական սկզբունքներով:

Պրոֆ. Ջահուկյանը այդ արել է հստակորեն առանձնացնելով այն պրոբլեմների շրջանակները, որոնք սահմանադրում են լեզվի գիտության իրավասության բնագավառը. այն է՝ ա) լեզվարանության տեսության (կոնցեպցիայի) պրոբլեմները, Է. Բ. Բ. լեզվի բնույթի, այլ երկվույթների նկատմամբ նրա ունեցած հարաբերության հարցը, լեզվի ծագման ու ֆունկցիավորման հարցերը, մնացած գիտությունների շարքում լեզվարանության դրաված տեղի հարցը, բ) լեզվարանական մեթոդի պրոբլեմները, ինչպես, լեզվի նկատմամբ ունենալիք մոտեցումը, լեզվի հետազոտության եղանակները, լեզվական նյութի սխտեմավորումը, լեզվարանական դիսցիպլինների ու բաժինների առանձնացումն ու խմբավորումը:

Հեղինակը. իհարկե, լիովին չի շրջանցել սրադիցիոն գնահատումները, ձևակերպումները, անհրաժեշտության դեպքում հենվել է նուանց վրա:

Աշխատության մեջ բավական զգուշություն է ցուցաբերված ժամանակագրական գործոնի հաշվառման նկատմամբ: Հայտնի է, որ մի շրջանը մյուսից կտրուկ չի սահմանազատվում, ինչպես և միշտ չէ, որ լեզվարանները գործել են ժամանակագրական տեսակետից որոշակիորեն տարբեր կապներում: Սրբեմն միևնույն լեզվարանի հայացքների վիճակագրության նրան կապել է տարբեր շրջանների կամ տարբեր ուղղությունների հետ: Աշխատության մեջ տվյալ լեզվարանի բնութագրվում է այն շրջանի մեջ, որը նրա հայացքների համար առավել բնորոշն է. և որի հետ են կապված նրա ստեղծած լեզվարանական հիմնական արժեքները: Սակայն միշտ չէ, որ տվյալ լեզվարանի գործունեությունը որոշակիորեն առնչվում է այս կամ այն ուղղության, դպրոցի հետ: Ուստի նյութի շարադրանքի ամբողջականությունը պահպանելու համար պրոֆ. Ջահուկյանը վարվել է ուրույն ձևով:

Աշխատության մեջ լեզվարանական կոնցեպցիաների և ուղղությունների գլխավոր ներկայացուցիչների հայացքների և հիմնական աշխատությունների բնութագրումից հետո՝ քննը-

վում են տվյալ ենթաշրջանում լեզվի ուսումնասիրության առանձին բնագավառներում ձևորեն լեզվաբանական հարցերը:

Գրախոսվող աշխատության առավելությունների շարքում պետք է հիշատակել նաև այն, որ լեզվարանության պատմությունը ներկայացված է ամբողջությամբ վերցված՝ իր տարածական գրեթե ողջ կտրվածքով և ժամանակագրական խորությամբ: Սա, անկասկած, հեղինակի լեզվարանական լուրջ պատրաստության, բարեխիղճ ու բրտնաբան աշխատանքի արտահայտությունն է: Երկու ստվար հատորների մեջ ամփոփված է լեզվարանության ավելի քան երկհազարամյա պատմության հիմնական պրոբլեմների բնութագրումը. ընդ որում ամբողջ նյութը խմբավորված ու մշակված է քննադատական, օբյեկտիվ վերլուծություններով, տեսական լուրջ շնորհաբաններով:

Լեզվարանության պատմությունը քննվում է երեք հիմնական փուլերով՝ ա) ստատիկ-վերլուծական լեզվարանության ձևավորման շրջան (հին լեզվարանություն. լեզվարանական գիտելիքների սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջը), բ) պատմա-համեմատական լեզվարանության ձևավորման շրջան (նոր լեզվարանություն—XIX դ.), գ) սխտեմային-վերլուծական լեզվարանության ձևավորման շրջան (ժամանակակից լեզվարանություն—XX դար): Երեք շրջաններն էլ բնութագրվում են առանձին ենթաշրջաններով: Առաջին և երկրորդ շրջանները քննվում են աշխատության առաջին հատորում, երրորդ շրջանը՝ երկրորդ հատորում: Յուրաքանչյուր ենթաշրջանի վերջում տրվում է գրականության ցանկ, իսկ յուրաքանչյուր հատորի վերջում՝ համառոտագրությունների և անձնանունների ցանկեր:

Ստատիկ-վերլուծական լեզվաբանությունը բնութագրելիս պրոֆ. Ջահուկյանը ընդգծում է, որ լեզվի գիտությունը նախապես (առաջին ենթաշրջան) մեկուսացված էր առանձին երկրներում, լեզվի հարցերը բնավում էին բանասիրական և փիլիսոփայական ուսումնասիրությունների հետ կապված, հետևություններ էին արվում պարզապես տվյալ լեզվի փաստերի վերլուծության հիման վրա, Այս կապակցությամբ հանդամանորեն գնահատվում են հին հնդկական և հունա-հռոմեական բերականությունը և այդ շրջանի լեզվարանական մտքի նվաճումները:

Անդրադառնալով երկրորդ ենթաշրջանին (միջին դարեր)՝ հեղինակը ուշադրություն է դարձնում այն տեղաշարժերին, որ կատարվեցին լեզվարանական հետազոտությունների քննադատում: Այս կապակցությամբ գնահատվում են մի շարք երկրներում լեզվարանական գի-

տութեան (չինական, լեզվաբանութիւն, արա-
քական լեզվաբանութիւն, սլավոնական լեզվա-
բանութիւն, հայկական լեզվաբանութիւն և
այլն) ունեցած հաջողութիւնները Միաժամա-
նակ նշվում է, որ միջին դարերում լեզվական
փաստերի քննութիւնը ճնշվում էր կրօնա-դոգ-
մատիկ ըմբռնումներից: Բայց զգալի բեկում
է նկատվում վերածնութեան շրջանում (երրորդ
ենթաշրջան). լեզվական երևույթների հետազո-
տութեան շրջանակները ընդլայնվում են, թեև,
իհարկեք, դեռևս զգացվում էր լատինական քե-
րականութեան դոկտրինաների ազդեցութիւնը:
Վեզվարանները փորձում են մշակել տարբեր
լեզուների հեշտ նկարագրման եղանակներ: Բա-
նականութեան դիրքերից ելնելով՝ ձգտում է
առաջանում նախորդ լեզվաբանական մեթոդ-
ները վերանայելու և բոլոր լեզուների համար
կիրառելի սկզբունքներ ստեղծելու ուղղութեամբ
(ընդհանրական և ռացիոնալիստական քերական-
ութիւն):

Պատմա-համեմատական լեզվաբանութիւնը
քննութեան պրոֆ. Ջահուկյանը նշում է, որ
XIX դ. առաջին կեսում (առաջին ենթաշրջան)
արդին կիրառվում էր պատմա-համեմատական
մեթոդը, որը ձևավորվել էր գիտութեան ընդ-
հանուր զարգացման, մասնավորապէս նախորդ
լեզվաբանութեան նվաճումների հաշվառման,
կուտակված նյութի դասակարգման ու մեկնա-
բանման հիմքի վրա: Այս կապակցութեամբ հե-
ղինակը մանրամասնորեն բնութագրում, գնա-
հատում է պատմա-համեմատական լեզվաբա-
նութեան հիմնադիրների՝ Բոպպի, Լասկի, Գրիմ-
մի, Վոստոկովի, Հոմբոլդտի լեզվագիտական
գործունեութիւնը: Այս շրջանում ցեղակից լե-
զուների միջև կատարվող համեմատութիւննե-
րին զուգահեռ առաջ են քաշվում ժողովուրդնե-
րի ծագման և լեզուների քերականական կա-
ռուցվածքի կազմավորման վերաբերող հարցեր:

XIX դարի երրորդ քառորդում (երկրորդ են-
թաշրջան) բնական գիտութիւնների և հոգե-
բանութեան արագ զարգացումը իր կնիքն է
դնում լեզվաբանական ըմբռնումների վրա: Ու-
րոշակի աշխատանք է տարվում նախալեզուների
(հիմք-լեզուների) վերականգնման ուղղու-
թեամբ: Դարի վերջին քառորդում (երրորդ են-
թաշրջան) ձգտում է առաջանում լեզուն գիտե-
լու իրրև ճշգրիտ օրենքներով զարգացող երե-
վույթ (հնչունական օրենքների հաստատում):
Որոշակիորեն զգացվում է Դարվինի էվոլյու-
ցիոն ուսմանքի ազդեցութիւնը: Տիրապետող
է դառնում, գերիշխում է լեզվի զարգացման
պատմական հայեցակետը: Աշխատութեան մեջ
վերոհիշյալ հարցերը հանգամանորեն լուսա-
բանված են հատկապէս երիտքերականների ու

նրանց առաջին քննադատների հայացքների ըն-
դարձակ շարադրանքում:

Ախտեմային-վերլուծական լեզվաբանութիւնը
քննութեան պրոֆ. Ջահուկյանը քննելիք
նյութը բաշխում է երկու հատվածի (նախասո-
վետական ու ժամանակակից արտասահմանյան
լեզվաբանութիւն և սովետական լեզվաբանու-
թիւն): Առաջին հատվածը ներկայացվում է
երկու ենթաշրջաններով (առաջին ենթաշրջան՝
1900—1920-ական թթ., երկրորդ ենթաշրջան
1920-ական թթ. վերջերից մինչև այժմ): Ընդ-
գծվում է, որ մինչև 1920-ական թթ. ընկած
ենթաշրջանը բնորոշ է նախորդ լեզվաբանական
(մասնավորապէս երիտքերականների) դոկտ-
րինաների ուժեղ քննադատութեամբ, լեզվի ըմ-
բռնման ու լեզվական հետազոտութիւնների
նոր հայեցակետերի առաջ քաշումով: Այս առի-
թով հեղինակը անդրադառնում է մի շարք ուղ-
ղութիւնների և այդ ուղղութիւնների ներկա-
յացուցիչների հայացքների շարագրմանն ու աշ-
խատութիւնների գնահատմանը: Հիշատակվում
են, օրինակ, պսիխոֆիզիոլոգիզմը (Ա. Մարտի,
Վան-Գինեկեն, Ա. Շախմատով), լոգիցիզմը
(Օտտո Սպարսեն), էսթետիզմը (Նեոֆիլոզոգիա՝
Կ. Յոսլեր, նեոլինգվիստիկա կամ տարածա-
կան լեզվաբանութիւն՝ Մ. Բարտոլի, Ջ. Բոն-
ֆանտե, Վ. Պիզանի), սոցիոլոգիզմը (ժնեի
զպրոց՝ Ֆերդինանդ դը Սոսյուր, Շ. Բալլի, Ա.
Սեյեք, Փարիզի դպրոց՝ Ա. Մեյե, Ժ. Վանդրիես,
Մ. Գրամմոն), կուլտուր-էթնոլոգիզմը և էթ-
նոլոգիստիզմը (է. Կասսիրեր, էգ. Սեպիր,
Վ. Շմիդտ), ֆորմալիզմը (Ա. Պեշկովսկի) և
այլն:

Երկրորդ ենթաշրջանը հատկանշական է գիտ-
ված նրանով, որ այստեղ գերիշխող է դառնում
սինխրոնիկ հայեցակետը, կատարվում է լեզվի
որոշակի սահմանազատում այլ հարակից երե-
վույթներից, լեզվաբանութիւնը՝ հարակից գի-
տութիւններից (լեզվի իմանենտ քննութիւն):
Առաջանում են մի շարք լեզվաբանական միջ-
դիսցիպլիններ (կիրառական լեզվաբանութիւն,
լեզվի հոգեբանութիւն՝ պսիխոլինգվիստիկա,
էթնոլինգվիստիկա և այլն): Տիրապետող լեզ-
վաբանական կոնցեպցիան ստրուկտուրալիզմն
է իր երեք խմբավորումներով՝ Պրագայի լեզ-
վաբանական խմբակ (Վ. Մատեզիուս, Ն. Տրու-
բեցկոյ, Ս. Կարցևսկի, Ռ. Յակոբսոն, Վ. Սկա-
լիշկա), կուպենհագենյան ստրուկտուրալիզմ (Վ.
Քրոնդալ, Լ. Նիսլե), ամերիկյան նկարագրա-
կան (գեսկրիպտիվ) լեզվաբանութիւն (Լ.
Քրոմֆիլդ, Ջ. Հաուս, Ջ. Հոքստ, Ջ. Քրեյչեր,
Բ. Բլոխ, Հ. Սմիթ):

Աշխատութիւնն ավարտվում է սովետական
լեզվաբանութեանը նվիրված հատվածով: Սկզբ-
բում հեղինակը անդրադառնում է այն պատ-

մա-հասարակական նախադրյալներին, որոնք որոշակի դեր խաղացին մարքսիստական լեզվաբանության ձևավորման գործում: Բնութագրելով լեզվաբանության զարգացումը սովետական շրջանում (սլեզվի նոր ուսմունքի տիրապետությանը և նրանից անկախ), պարզաբանում, լուսարանում է այն հանգամանքները, որոնցով սովետական լեզվաբանությունը կարողացավ հաղթահարել գոեհիկ-մատերիալիստական մեկնարանումները և ուզի հարթել լեզվի գիտության բուռն զարգացմանը մեզ մոտ: Հանգամանորեն են ներկայացված սովետական լեզվաբանության նվաճումները:

Ինչպես առաջին հատորում, այնպես էլ երկրորդ հատորում յուրաքանչյուր ենթաշրջան բրնութագրելուց հետո, պրոֆ. Ջահուկյանը հատուկ ենթարածնով տալիս է լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներում արված հետազոտությունների վերլուծությունը: Թեև որոշ չափով սրանք տեղեկատու բաժիններ են հիշեցնում, բայց արվում են նաև տեսական-քննական լուրջ դիտողություններ:

Լեզվաբանության պատմության երեք հիմնական շրջանների վերլուծության բնագավառում հեղինակի կատարած աշխատանքի դնահատումը միակողմանի կլինի, եթե մենք այստեղ չնշենք մի կարևոր հանգամանք ևս: Այդ խնամքով մրշակված որոշակի հարցերի այն ամբողջությունն է, որը և կազմում է հեղինակի ասպեկտը երեք կարևոր ստորարածանումների էությունը բացահայտելու վերաբերյալ: Այդ հարցերը օգնում են լեզվաբանության պատմության երեք շրջանների բնութագրելու հիմնավորելուն՝ դրանց բնորոշ հատկանիշների խրստիվ հաշվառմամբ:

Հեղինակի հայեցակետը կազմող հարցերը հետևյալներն են. ա) ժամանակային գործոնի հաշվառումը, բ) նյութի քննության տիրապետող մեթոդը, գ) լեզվի կառուցվածքային տարրերի փոխհարաբերության ըմբռնումը, դ) իմաստավոր միավորների (բառերի) ձևի և բովանդակության (նշման և իմաստի) փոխհարաբերության ըմբռնումն ու մեկնարանումը, ե) լեզվական վերլուծության հիմնական միավորների բնույթի հաշվառումը, զ) լեզվի որևէ կոնկրետ դրսևորման վրա հիմնական ուղադրություն դարձնելը, լ) լեզվական հետազոտությունների նպատակները, ը) լեզվաբանության առարկայի տարածական ընդգրկման և ընդհանրացման աստիճանի հաշվառումը, թ) լեզուների փոխհարաբերության ըմբռնումն ու մեկնարանումը, ժ) լեզվի և հարակից երևույթների ու լեզվաբանության իմացության այլ բնագավառների կապի դնահատումը, ժա) լեզվի և մտածողու-

թյան ու գիտակցության փոխհարաբերության ըմբռնումն ու մեկնարանումը:

Առաջ քաշելով վերը նշված հարցադրումը՝ պրոֆ. Ջահուկյանը որոշակի է դարձնում իր հայեցակետը լեզվաբանության պատմության երեք շրջանարածանումների նկատմամբ: Այսպես, օրինակ, ըստ ժամանակային գործոնի հաշվառման՝ առաջին շրջանի համար բնորոշ է ստատիկ քննությունը, երկրորդի համար՝ պատմական քննությունը, երրորդի համար կառուցվածքային-ժամանակագրական քննությունը: Կամ՝ ըստ նյութի քննության տիրապետող մեթոդի՝ առաջին շրջանի համար բնորոշ է ստատիկ-վերլուծությունը, երկրորդի համար՝ համեմատական քննությունը, երրորդի համար՝ սիստեմային-վերլուծությունը և այլն:

Լեզվաբանության պատմության և տեսության հարցերի ամբողջական և դիտական խոր քննությունը այս աշխատությունում՝ նրան տվել է հանրադիտարանային հարստության արժեք: Ահա թե ինչու նրա նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջացել նաև հայ ընթերցողների շրջանակներից դուրս: Եվ ինչպես այլ գրախոսներ (արտասահմանում), այնպես էլ մենք գտնում ենք, որ սույն աշխատությունը ընթերցողների լայն շրջաններին ներկայացնելու համար՝ խիստ անհրաժեշտ է նրա ուսերենթարգմանությունը: Այս կապակցությամբ հարկավոր ենք համարում անել որոշ դիտողություններ:

1. Լեզվաբանության պատմության երեք հիմնական շրջանները սուկ իրրև ձևավորման շրջաններ ներկայացնելը խիստ սահմանափակում է դրանց իրական սահմանագծերը: Ավելի նըպատակահարմար է կոչել՝ ստատիկ-վերլուծական լեզվաբանության շրջան, պատմա-համեմատական լեզվաբանության շրջան, սիստեմային-վերլուծական լեզվաբանության շրջան:

Իհարկե, հաշվի ենք առնում, որ բոլոր անվանումներն էլ ինչ-որ չափով պայմանական են, տրվում են որոշ վերապահությամբ:

2. Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը հայ ականավոր լեզվաբաններին անդրադառնում է թուրքիկ կերպով: Գուցե նա հաշվի է առել այն հանգամանքը, որ հայ լեզվաբանության պատմությունը հանգամանորեն մենագրական ուսումնասիրության է ենթարկված: Այնուամենայնիվ, թերևս դրթի լեզվաբանական աշխատանքների առանձին բնագավառներ բաժնում պետք է անհրաժեշտ տեղ հատկացվեր, օրինակ, Ա. Այտրնյանին, Հր. Աճառյանին, Մ. Արևիկյանին, Գր. Ղափանցյանին: